– Լաւ տղայ է, բայց...

Նա կտրեց իր խօսքը, եւ բոպէական լռութիւնից յետոյ շարունակեց.

— Գիտե՞ս, Ֆարհատ, քանի օրից յետոյ Կարօն իր ընկերների հետ գնալու են մի տեղ, դու նրանց հետ չգնաս:

— Ինչո՞ւ չպէտք է գնամ:

— Այնպէս... մի՛ գնա... ես չեմ կարայ ասել... հայրս ինձ կսպանէ, թէ ասեմ...: Աղաչում եմ, Ֆարհատ, մի՛ գնա նրանց հետ:

Այդ խօսքերի միջոցին բարեսիրտ օրիորդի աչքերը լցոեցան արտասուքով. նա պինդ կպած իմ կուրծքին, գրկել էր ինձ, երկար եւ երկար աղաչում էր, որ ես չմասնակցեմ Կարօյի եւ նրա ընկերների արշաւանքին: Բայց ի՞նչ արշաւանք էր այդ, դէպի ո՞ր կողմը եւ ի՞նչ նպատակով, — դրանց մասին ծածկամիտ Մարօն ոչինչ չյայտնեց:

— Ա՛խ, Կարոն... նա սիրտ չունի... նա գազա՛ն է, մարդ չէ... նրա համար մի ադամորդուն սպանելը այնպէս է, ինչպէս խեղճ հաւի վիզը կտրելը... Ես սուտ չեմ ասում, Ֆարհատ, ես իմ աչքով եմ տեսել..: Ա՛խ, հեռու կա՛ց այս մարդից, Ֆարհատ, չբարկացնես նրան... նա աստոած չունի...: Նա բարեկամ, ընկեր, — այս բաները չէ իմանում...

Այսպէս խօսում էր Մարօն արտասոախառն հեկեկանքով, բայց ինձ բոլորովին անհաւատալի էր երեւում, մտածել Կարօյի մէջ մի այնպիսի վայրենութիւն, որպէս նկարագրեց նրան Մարօն: Մի այնպիսի տղամարդ, որ բոլոր սրտով նոիրել էր իրան մարդասիրութեան գործին, չէր կարող գազան լինել: Ես Կարօյին լաւ էի ճանաչում, ճանաչում էի նրան երեխայութիւնից, բայց միթէ՞ փոխոել էր նա:

— Ես չեմ հաւատում, Մարօ: Կարօն այդպէս չէ, — կտրեցի ես օրիորդի խօսքը: — Ես նրանից չեմ բաժանոի, ուր որ գնայ, ես էլ կը գնամ նրա հետ:

Մարօն յայտնեց, թէ որպէ՛ս նա մի գիշեր սպանեց իր ամենալաւ ընկերներից մէկին, մի հնդկացի հայ երիտասարդի, որի վրայ փոքր-ինչ կասկած ունէր, թէ կյայտնէ իր գաղտնիքը. եւ աւելացրուց, թէ կարող էր մինչեւ անգամ նրա դիակը ցոյց տալ ինձ, որովհետեւ այս անցքը պատահել էր մի քանի օր առաջ: Միայն ինքը, Մարօն, չէր կարող ամէն ինչ բացարձակ ասել ինձ, որովհետեւ վախենում էր իր հօրից:

— Ես միշտ հաւատարիմ կը մնամ Կարօյին, ես դաւաճանութիւն չեմ գործի նրա դէմ, — ասեցի ես: